

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2017 թվականի N _____ -Ն

«ԳՅՈՒՄՐՈՒ N 3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 958-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածը, 685-րդ հոդվածը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, ինչպես նաև 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը և 25-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան 85 հասցեում գտնվող 308797600 ՀՀ դրամ սկզբնական արժեքով և 3033.56 քառ. մետր մակերեսով ուսումնական մասնաշենքը, 2971500 ՀՀ դրամ սկզբնական արժեքով և 29.19 քառ. մետր մակերեսով կաթսայատունը, 671900 ՀՀ դրամ սկզբնական արժեքով և 6.6 քառ. մետր մակերեսով (10.56 խ.մ.) պարիսպը և 0.294897 հեկտար մակերեսով հողատարածքը (անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման 2013 թվականի մարտի 21-ի հ. 21032013-08-0373 վկայական) հետ վերցնել «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին՝ նպատակային նշանակությամբ օգտագործման համար:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 222.210.00162):

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման

աշխատանքներն իրականացնելու նպատակով լուծարման հանձնաժողովի ստեղծումը՝ դրա կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության (երկու անդամ) ներկայացուցիչների,

2) սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում լուծել «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2017 թվականի փետրվարի 7-ին կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման N 07/0017 պայմանագիրը սահմանելով, որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին,

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո քառամսյա ժամկետում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին,

4) հաստատել լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռը:

4. «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման հաշվեկշռի կազմման օրվա դրությամբ այդ կազմակերպության դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը, իսկ մնացած գույքը հանձնել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

5. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

1) լուծարման հանձնաժողովի ստեղծումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել կազմակերպության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների հանձնումը լուծարման հանձնաժողովին,

2) ապահովել «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սովորողների բնականոն ուսումնառությունը «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում:

6. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից «Գյումրու N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում դադարեցվում է սովորողների ընդունելությունը

7. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Փորձնական փուլի ծրագրի ավագ դպրոցների և դրանց հարակից հիմնական դպրոցների ցանկը հաստատելու, Հայաստանի Հանրապետության մի շարք պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ վերանվանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 11-ի N 231 և հուլիսի 25-ի N 1392-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» N 958-Ն որոշման հավելվածի 31-րդ կետը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 958-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում աշակերտների թվի նվազման, ինչպես նաև «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում իրականացվող ավագ դպրոցի կրթական ծրագրով սովորողներին միավորելու անհրաժեշտությամբ (որակյալ մանկավարժական կադերի ապահովում, նյութատեխնիկական բազայի հարստացնելու պայմանով):

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

Դպրոցի աշակերտների թվաքանակը տարեցտարի նվազում է: 2016-2017 ուսումնական տարում դպրոցում սովորել է 141 աշակերտ: «Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կազմակերպելու և համապատասխան մասնագիտական որակյալ կադրերով ապահովելու նպատակով առաջարկվում է դպրոցը լուծարել, իսկ սովորողների տեղափոխել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, որը հետագայում աշակերտական համակազմ ձևավորվելու արդյունքում և իր մասնագետների/անհարժեշտության դեպքում նաև դպրոցի մասնագետների/միջոցով անխափան կիրականացնի տվյալ դպրոցում մասնագիտական ուղղվածություն ունեցող սովորողների բնականոն ուսումնական գործընթաց, ինչպես նաև հիմնադրամում մանկավարժություն սովորող ուսանողներին հնարավորություն կտա տվյալ դպրոցում իրականացնելու պրակտիկաները:

Գյումրու թիվ 3 ավագ դպրոցն ունի 39 աշխատող, որից 21-ը ուսուցիչներ, 4-ը վարչական աշխատողներ, 14-ը ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմ:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել գիտական ուղղվածություն ունեցող մանկավարժական ներուժով, մասնագիտական որակավորումները միջազգային ասպարեզում դարձնել ճանաչելի:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու, գույք տրամադրելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 958-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու, գույք տրամադրելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 958-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 3 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 958-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՈՒ
ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ /Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 2017-08-08 01/14/13965-17	Առաջարկություն և դիտողություն չունի		
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-06 N 01/9-2/12214-17	<p>1.Նախագծի 2-րդ կետով նախատեսվում է ստեղծել լուծարման հանձնաժողով: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է Նախագծով հստակ նշել լուծարման հանձնաժողովի ստեղծման ժամկետը:</p> <p>2.Նախագծի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նշված «կազմակերպությունում» բառն անհրաժեշտ է փոխարինել «Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում» բառերով, քանի որ պարզ չէ, թե ինչ կազմակերպության մասին է խոսքը:</p> <p>3. Անհրաժեշտ է ճշգրտել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թումանյան 85 հասցեում գտնվող «Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված շենք-շինությունների և հողատարածքի մակերեսները, քանի որ Նախագծի 1-ին կետում նշված է՝ համապատասխանաբար, 3069.35 քմ և</p>	<p>1.Ընդունված է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի համարակալումները ճշտելուց հետո 4-րդ կետում/նախկինում 2-րդ կետում/ առաջարկին համապատասխան լարացվել է հանձնաժողովի ստեղծման մասին ժամկետը:</p> <p>3.Որոշման նախագծի համարակալումները ճշտելուց հետո 6-րդ կետի/նախկինում 4-րդ կետի/ 2-րդ ենթակետում առաջարկին համապատասխան «կազմակերպությունում» բառը փոխարինվել է «Գյումրու թիվ 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում» բառերը:</p> <p>3. Որոշման</p>

		<p>2948.97 քմ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության 03.07.2017թ. N04/2897-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ՊՈԱԿ-ների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ համապատասխանաբար 3040.6 քմ և 2888 քմ:</p> <p>4. Անհրաժեշտ է ճշգրտել Նախագծի կետերի համարակալումները:</p>	<p>4.Ընդունվել է</p>	<p>նախագծում ճշտվել է լուծարվող կազմակերպությանն ամրացված շենքի մակերեսները գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականների հետ:</p> <p>4.Որոշման նախագծում ճշտվել է նախագծի կետերի համարակալումները:</p>
<p>3.</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 01.08.2017 թ. N 01/22.34/4970-17</p>	<p>1.Նախագծի նախաբանում հղում կատարել նաև ««Պետական գույքի կառավարման մասին»» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածին:</p> <p>2.Նախագծի 1-ին կետի ««տրամադրելով»» բառը փոխարինել «տրամադրել» բառով:</p> <p>3.«աշվի առնելով այն հանգամանքը, որ Նախագիծը կրում է անհատական բնույթ, իսկ Նախագծով փոփոխության ենթակա իրավական ակտը նորմատիվ բնույթի իրավական ակտ է, հետևաբար հարկ է նկատի ունենալ ««Իրավական ակտերի մասին»» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ և լրացումներ կարող է կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով, անհրաժեշտ է նախագիծը դարձնել նորմատիվ բնույթի նախագիծ:</p> <p>4.Նախագծում սահմանել նոր դրույթ՝ 1-ին կետից բխող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների և դրանց</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Չի ընդունվում</p>	<p>1. Որոշման նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է հղում:</p> <p>2.Որոշման նախագծի 1-ին կետում ««տրամադրելով»» բառը փոխարինվել է ««տրամադրել»» բառով:</p> <p>3.Որոշման նախագիծը առաջարկին համապատասխան դարձվել է նորմատիվ իրավական ակտի նախագիծ:</p> <p>4.Որոշման նախագծի 7-րդ կետում հստակ նշված է հիմնադրամի հետ անհատույց</p>

		կատարման վերաբերյալ:	ժամկետների		օգտագործման իրավունքով պայմանագրի կնքման ժամկետը:
--	--	-------------------------	------------	--	--